ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ N 111-Ա

25 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2018թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՊԱՆ ՔԱՂԱՔԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶՈՒՄ ԱՌԿԱ ԱՆՃՇՏՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՌԱՆՁԻՆ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆԸ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29)-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշման, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 2010 թվականի հունիսի 1-ի N186-Ն հրամանի և հաշվի առնելով Կապան համայնքի ղեկավարի պաշտոնակատարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության ___10___ կողմ, ___0___ դեմ, ___0___ ձեռնպահ արդյունքներով, ***համայնքի ավագանին ո ր ո շ ու մ է.***

1. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքի կադաստրային քարտեզում հայտնաբերված սխալի ուղղման առաջարկությանը, ըստ որի նախատեսվում է համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն հանդիսացող ջրային նշանակության հողերից 0,46129 հեկտար /կադաստրային ծածկագրեր՝ 09-001-1179-0001, 09-001-1181-0001, 09-001-1182-0001/, անտառային հողերի «անտառներ» հողատեսքից 4.57194 հեկտար /կադաստրային ծածկագրեր՝ 09-001-0035-0001, 09-001-0036-0001/ և համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նշանակության ընդհանուր օգտագործման հողերից 0,04037 հեկտար /կադաստրային ծածկագիր՝ 09-001-1178-0001/ փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի կատեգորիա՝ էներգետիկայի օբյեկտների հողեր գործառնական նշանակությամբ՝ «Կապան Էնեղժի» ՓԲԸ-ի սեփականություն հանդիսացող հիդրոէլեկտրակայանի շենք-շինությունների սպասարկման համար:

2. Համայնքի ղեկավարի պաշտոնակատարին՝ կազմել և օրենսդրությամբ սահմանված կարգով քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի համաձայնեցմանը ներկայացնել համապատասխան հողաշինական գործը:

Կողմ (10)՝

ԱՍՐՅԱՆ ՎԱՉԵ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՄՈ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿԱՐԵՆ

ԴԱՆԻԵԼՅԱՆ ՎԱՀԵ

ՄԵՍՐՈՊՅԱՆ ՆԱՊՈԼԵՈՆ

ԴԱՎԹՅԱՆ ՆԱՐԵԿ

ՄԿՐՏՉՅԱՆ ԱՐԱ

ԴԱՎԹՅԱՆ ՇԱՆԹ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԺԱՆ

Դեմ (0)

Ձեռնպահ (0)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆԱՐԵԿ ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

2018 թ սեպտեմբերի 26
ք. Կապան